ՔՆԱՐԻԿ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ԲԱՌԻՄԱՍՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Լեզվում բառերի իմաստային փոփոխությունները տեղի են ունենում համեմատաբար երկար ժամանակահատվածում որակական փոփոխությունների աստիճանական կուտակման ձևով: Բառերի իմաստների փոփոխության տեսակները սերտորեն կապված են դրանք առաջ բերող տարբեր պատճառների հետ, որոնք կարող են լինել ինչպես լեզվական, այնպես էլ արտալեզվական:

Լեզվական փոփոխությունները պայմանավորված են տվյալ լեզվի զարգացման ներքին օրինաչափություններով և բխում են զուտ լեզվական գործոններից: Արտալեզվական են բառիմաստի այնպիսի փոփոխությունները, որոնց համար այս կամ այն ձևով ազդակ են ծառայում կամ նպաստում են գիտության և մշակույթի առաջընթացը, երկրի, ժողովրդի կյանքում քաղաքական-տնտեսական շրջադարձային տեղաշարժերը կամ լեզուների տարբեր ազդեցությունները:[1]

Բառիմաստի փոփոխություններին կատարվում են բառիմաստի նեղացման, ընդլայնման և շրջման հետևանքով:

Բառիմաստի նեղացում: Լեզվի պատմական զարգացման ընթացքում խոսքային գործածության համատեքստում հայերենում տեղի է ունեցել բառի իմաստային ծավալի նեղացում՝ բառի ավելի լայն իմաստի մասնավորման շնորհիվ:

Ղաղման. գ. 1. Դեղ, ճար; 2. Ելք, հնարք, միջոց: 3. Փխբ. Ամոքում, սփոփոնք, հետագայում ստացել է «հացաբույսերի մանրացրած ցողունի, հարդի» իմաստը:

Խաչ. գ.1 Քրիստոնեական կրոնի խորհրդանիշն ու պաշտպանմունքի առարկան՝ երկու իրար խաչաձևող ծողերի ձևով, հետո ձեռք է բերել նաև՝ «հոգս, տառապանք, տանջանք» իմաստները:

Սարտիկ. գ.1. Կռվի մասնակցող զորական: 2. Շարքային զինվոր: 3. Փխբ. Որևէ գործին նվիրված ու եռանդուն գործիչ, այժմ՝ ռարական անուն:

Բաշիմաստի ընդլայնում: Իմաստափոխական այն երևույթն է, երբ լեզվի պատմական զարգացման ընթացքում բառը, կորցնելով իր էական հատկանիշների մի մասը, ընդարձակում է իր իմաստային ծավալը:

---

[1] Տե՛ս Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Ե. 1999, էջ 111:

Ժամապահ, գ. Հանձնարարված կետը պահպանող զինված պահակ, զինվորական պահակ, հետագայում նաև՝ առհասարակ պահակ, հերթապահ, պահապան:

Տարեգրություն, գ. Գրվածք՝ գիրք, որի մեջ ժամանակագրական կարգով գրի են առնված պատմական դեպքերը: Հետագայում, ընդարձակելով իմաստը, ձեռք է բերել «առհասարակ ամեն տեսակ դեպքերի՝ հաշիվների՝ պատահարների ժամանակագրական գրառում» իմաստը:

Բառիմաստի շրջում կամ ընեռացում: Լեզվի պատմական զարգացման ընթացքում բառը իր բուն իմաստին հակառակ նոր իմաստ է ստանում:

Պարապ, ած. 1. Ոչնչով չզբաղվող, օգտակար աշխատանք չկատարող: 2. Տվյալ պահին զբաղմունքից ազատ: 3.Զբաղեցրած, չգրված, ազատ: 4. Դատարկ: 5. Սին, ունայն. մինչդեռ Պարապել նշանակում է 1. Զբաղվել մի բանով: 2. Որևէ բան սովորել: 3. Ուսուցանել, սովորեցնել:

Բառերի իմաստային փոփոխությունները գերազանցապես փոխաբերական գործածության հետևանքն են և ունեն իրենց պատճառներն ու հիմունքները[2]:

Բերեք պրոֆ. Ս. Էլոյանի «Արդի հայերենի նորաբանությունների բառարանից» քաղված իմաստափոխված բառերի ցանկը[3]:

Սոնտ, գ. 1. Տախտակից սարքած մեծ՝ քառանկյուն աման՝ սնդուկ՝ զանազան բաներ մեջը լցնելու և պահելու համար: 2. Սեղանի դարակ, գզրոց: 3. Փայտե տուփ՝ զարդեր և զանազան մանր բաներ պահելու համար:4.Փայտե տուփ՝ որպես պատյան: 5. Տարբեր չափի ու ձևի և տարբեր նյութերից սարքած աման՝ ավելորդ բաներ մեջը լցնելու՝ թափելու համար: 6. Տես Գանձարկղ: Գործածվում է նաև «հեռուստացույցի» իմաստով (փոխել արկղի ալիքները):

Բուրգ, գ. 1. Աշտարակաձև շինություն, աշտարակ: 2. Աշտարակաձև կոթող շինության վրա: 3. Քառակուսի նիստով և հետզհետե նեղացող բարձր քարե շինություն, որ Հին Եգիպտոսում փարավոնները կառուցել էին տալիս որպես նիստ, և որի եռանկյունաձև կողմերը միանում են մի կետում, որ կոչվում է բուրգի գագաթ: 5. Փխբ. Որևէ բանի մեծ կույտ, շեղջ, դեզ: Այժմ գործածվում է նաև «պետական, վարչական, ֆինանսական և այլ կառույցներն իրենց ցուղային ներքին ենթակառույցներով, որոնցից յուրաքանչյուրն ունի «ղեկավար գագաթ» իմաստով[4]:

---

[2] Տես Եզեկյան Լ., Հայոց լեզու, Ե. 2005, էջ 115:
[3] Էլոյան Ս., Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Ե. 2002:
[4] Նշված բառերի իմաստների բացատրությունները բերելիս օգտվել ենք Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանից» Ե. 1976թ:

Երևաթջիղ. ած. 1. Երկաթե ջիղ ունեցող, փոխաբերական իմաստով՝ ամուր, կայուն, հաստատուն:

Երկնագույն. ած 1. Երկնքի գույն ունեցող, բաց կապտագույն, մավի: Իմաստային նորաբանությունն է և նշանակում է համասեռամոլ:

Թավշյա. ած. նույնն է Թավշե: 1. Թավշից պատրաստված: 2. Թավշի նման: 3. Փխբ. Նուրբ, քնքուշ: 4. Փխբ. Փափուկ՝ մեղմ ու դուրեկան: 5. Փխբ. Մեղմ, խաղաղ. այժմ՝ «անարյուն, առանց ուժային մեթոդների, սահմանադրական ճանապարհով» (թավշյա հեղափոխություն):

Թափանցիկ. ած. 1. (ֆիզ.) Որի միջով լույսը թափանցում է, լուսանցիկ: 2. Որի միջով կարելի է տեսնել մյուս կողմի առարկաները: 3. Փխբ. Քողարկված, բայց հեշտությամբ հասկացվող, ներքին՝ ծածուկ իմաստ ունեցող, որևէ բան ակնարկող: 4. Նոսր. նուրբ, շատ բարակ: 5. Փխբ. Թափանցող, խորաթափանց: 6. Զգայուն, տպավորող, դյուրազգաց: 7. Փխբ. Հստակ, վճիռ: 8. Փխբ. նուրբ ու ճերմակ մաշկ ունեցող: 9. Փխբ. Անմյութական, անմարմին: 10. Փխբ. Արտացոլող, անդրադարձնող: 11. Փխբ. Քնքուշ, քաղցր: Այժմ, դառնալով իմաստային նորաբանություն, գործածվում է «տեսանելի, մատչելի, հրապարակային, բացահայտ, ոչ գաղտնի, չսքողված» իմաստով (թափանցիկ ընտրություններ):

Թեժ. ած. 1. Տաք: 2. Թունդ, բարկ: 3. Բորբոք, եռուն, կատաղի: 4. Փխբ. Բուռն՝ հախուռն՝ ջերմագին զգացմունքով տոգորված՝ համակված, բուռն զգացմունքներ արտահայտող:5. Փխբ. Հուզումնալից, հույզերով բորբոքված: 6. Խանդավառությամբ՝ ոգևորությամբ համակված, եռանդալից:Թեժ կետ բառակապակցության մեջ ստացել է «երկրագնդի բախման՝ պատերազմի վտանգ պարունակող աշխարհատարածք» իմաստը (Վերջերս «թեժ կետ» է համարվում նաև ադրբեջանաղարաբաղյան սահմանը):

Թույն. գ. 1. Մարմնի վրա վնասակար՝ քայքայիչ՝ սպանիչ ազդեցություն գործող նյութ, մահաբեր՝ մահացու նյութ, մահաղեղ: 2. Մետաղների վրա քայքայիչ ներգործություն ունեցող նյութ, քերիչ նյութ: 3. Փխբ. Հոգին խռովող՝ հոգեկան հանգստից հանող՝ մտատանջությունների մեջ գցող հանգամանք՝ խոսք, զգացմունք են: 4. Փխբ. Բացասական՝ խիստ վատ ազդեցություն գործող բան, վնասակար երևույթ՝ գաղափար ևն: 5. Փխբ. Չարություն, նենգություն: 6. Փխբ. Չայրույթ, դառնություն: 7. Փխբ. Վնասակար կամ շատ վատ ուտելիք կամ խմելիք: Վերջին շրջանում, դառնալով իմաստային նորաբանություն, ստացել է «ահավոր հետաքրքիր, արտակարգ, խիստ ինքնատիպ, ցնցող որևէ բան, երևույթ» իմաստը (թույն ֆիլմ, տեսաերիզ ևն):

Ժանգառոտ. գ. (ժդ.) 1. Երեկոյան մութն ընկնելու ժամանակը, մթնշաղի պահը: 2. Երեկոյան մթնշաղը, մութնուլույսը: Այժմ, փոխաբերական իմաստով

գործածվելով իբրև նորաբանություն, ստացել է «որևէ բանի (հոգու, սրտի, ուղեղի, մտքի և ն) վրա իջած խավարը, մութը» իմաստը, իսկ «ժանգասիրտ» բաղադրությունում՝ «թունոտ՝ դաժան սիրտ ունեցող» իմաստը (ժանգասիրտ մարդ):

Լեռնոտ, ած. Որտեղ շատ լեռներ կան, լեռնային, լեռնաշատ, այժմ փոխաբերական իմաստով՝ Ամուր, ամրակուռ:

Լողզել, նբ. (ժդ.) 1. Քսել, ծեփել: 2. Քսելով կեղտոտել, ապականել: 3. Փխբ. Խիստ հանդիմանել, կշտամբել՝ ամոթանք տալ, անարգել, ներկել, այժմ՝ Որևէ խնդիր անորոշ՝ ոչ հստակ դարձնել, շրջանցել:

Լողացող, ենթ. դբ. Լողալ-ի և Լողանալ-ի: 1. Ջրի մեջ կամ մակերևույթին գտնվող՝ սարքված, այժմ՝ «շարժվող, փոփոխվող, անկայուն» իմաստով (լողացող փոխարժեք):

Խաղ, գ. 1. Խաղալ, խաղալու գործողությունը: 2. Բավականություն՝ ժամանցի նպատակ ունեցող զբաղմունք: 3. Երեխաների արարքները՝ զբաղմունքը: 4. Իբրև սպորտածև՝ բավականության՝ ժամանցի միջոց և ծառայող զբաղմունք, որ ներկայացնում է որոշակի կանոնների, արարքների ու դրանց եղանակների ամբողջությունը: 5. Բախտախաղ: 6. Ներակատարություն: 7. Երգ: 8. Երաժշտական եղանակ, երաժշտություն: 9. Պար: 10. Ոսկորների՝ իրար միանալու տեղը, հոդ: 11. Փխբ. Ծփանք, վետվետում: 12. Ձայնի՝ աչքերի՝ դեմքի արտահայտիչ փոփոխություն: 13. Փխբ. Խորամանկություն, մեկին վնասելու՝ վարկաբեկելու՝ պատժելու և համար գործադրված խորամանկ արարք: «Խաղ չկա» բառակապակցության մեջ գործածվում է «անպատժելիության, անառարկելիության, միահեծանության մթնոլորտ, որի դեմ անհնար է պայքարել» իմաստով (մեր դեմ խաղ չկա), «խաղեր տալ» բառակապակցությունում՝ «ինչ-ինչ նպատակներով գործունեություն ծավալել» իմաստով: «Կարագախաղ»-կարագի որակի կեղծում, «Նավթային խաղեր»- նավթի վաճառքի և արտահանման եկամուտներից օգտվելու համար արվող գործարքներ:

Խաչքարերես, ած. Խաչքարե երես ունեցող, գործածվում է նաև «տառապանքի դրոշմ կրող» իմաստով:

Խավոտ, ած. Վրան խավ ունեցող. այժմ գործածվում է նաև «ունևոր, հարուստ» իմաստով (խավոտ խավ):

Խնևահատիկ, գ. Խնկի հատիկ, գործածվում է նաև՝ «կարճառոտ հիշատակի խոսքի» իմաստով:

Խոռոմվան, գ. 1. Երկար, սնամեջ, սովորաբար գլանաձև առարկա, որ ծառայում է իբրև հեղուկատար, գազատար և հարմարանք, փող, փողրակ, ագուգա: 2. Թիթեղյա նույնպիսի հարմարանք վառարանի, ծխնելույզի համար:

3. Տես ծխնելույզ: 4. Երկարավուն գլանաձև սնամեջ առարկաների անվանում: 5. (կենսաբ.) Մարմնի սնամեջ անոթ՝ փող: 6. (բաբ.) Բույսի ցողունի սնամեջ տարածություն: 7. (գաղտնտ.) Գլանաձև փաթաթված որևէ բան, թղթի՝ թերթի և խողովակաձև փաթեթ: 9. Փխբ. (արևմտհ.) Ուղի, անցում, այժմ՝ «ուղի, օգնության միջոց» իմաստով:

Խստածո. գ. Հարստացված՝ վերամշակված հանքանյութ՝ կոնցենտրատ, այժմ նաև՝ «անկապ, անհասկանալի արտահայտություններով խառնված խոսք» իմաստով:

Ծածկ. գ. 1. Շինության տանիք, կտուր: 2. Շինվածքի՝ անմիջականորեն պատերի վրա հենվող ծածկույթ: 3. Առհասարակ որևէ կարգի ծածկույթ: 4. Ավտոմեքենայի, սայլի և ծածկոց: 5. Երկրի բուսական ծածկույթը: 6.Փողոցի ճանապարհ՝ հատակի երեսակ՝ ծածկույթ: 7.Փխբ. Տուն, օթևան, կացարան: 8. Նույնն է՝ Տանիք, այժմ գործածվում է նաև «հովանավորություն, ապահովություն» իմաստներով (Աժ-ն դիտվում է որպես հարմար «ծածկ» այլ գործերով զբաղվելու համար):

Ծածկություն. գ. Նույնն է՝ Ծածկ և ծածկոց, այժմ ստացել է նաև «որևէ հարկի կամ տուրքի դրամական արժեքի փոխարեն այլ ապրանքով կամ հումքով վճարելը» իմաստը:

Ծակվել. ան. դբ., կր. և չբ. Ծածկել-ի: Ժրգ.՝ Գաղտնիքը բացահայտել՝ բացվել՝ խոստովանել: Գործածվում է նաև «թմրադեղ սրսկվելու» իմաստով:

Կանաչ. ած. 1. Սպեկտրի հիմնական գույներից մեկը՝ կապույտի և դեղինի միջինը: 2. Նույնն է՝ Կանաչեղեն: 3. Խոտ, սեզ: 4. Բուսականություն: 5. Կանաչ փառ՝ շերտ: 6. Կանաչ ներկ: 7. (հզվդ.) Ծիածան: 8. ած. Կանաչ գույն ունեցող: 9. Չհասած, խակ (պտուղների մասին): 10. Փխբ. Թարմ, դալար, չչորացած: 11. Փխբ. Հասուն չդարձած, արբունքին չհասած, մատղաշ: Այժմ գործածվում է նաև «դոլարի» իմաստով: «Կանաչ» արմատով կազմվել են.

Կանաչագույն. ած. Փխբ. Դոլար ակնկալող, աղերսող:

Կանաչահմայիլ. գ., Փխբ. Դոլարով հմայողները՝ հրապուրողները:

Կանաչանոց. գ., ած. Փխբ. Դոլարանոց, դոլարների արժեք ունեցող:

Կանաչ-կարմիր. ած. Փխբ. Ձահել, ուրախ:

Կապկառատ. ած. 1. Կապիկներով առատ. գործածվում է նաև «կապկորեն ընդօրինակողներով, կապկողներով լի» իմաստով:

Կաառուտան. ած. Նույնն է՝ Երկնագույն, համասեռամոլ:

Կառուցողական. ած. Կառուցողին հատուկ, շինարարական, այժմ գործածվում է նաև 1. Կառուցող, սերտող, արարող: 2. Օգտակար, արդյունավետ, շինիչ իմաստներով:

Կառգ. գ. 1. Որևէ ամբողջություն կազմող մասերի կամ միավորների հաջորդականությունն ու ընդհանուր հորինվածությունը: 2. Իրար կողքի դասավորված նստելու տեղերի՝ աթոռների կազմած շարքերից յուրաքանչյուրը: 3. Հերթականություն, հաջորդականություն, հերթ: 4. Կարգապահություն և այլն, հետագայում գիտական տերմինաբանության մեջ ձեռք է բերել «առարկաների, երևույթների ևն դասակարգության ստորաբաժանում կամ նրանց առավել ընդհանուր՝ բնութագրող հատկանիշը, կատեգորիա» (քերականական կարգ) իմաստը:

Կառուսել. գ. Նավակի, տանկի, ծիու ևն ձևով նստատեղերով պտտվող հարմարանք հասարակական վայրերում՝ մանկական զվարճախաղերի համար: Այժմ գործածվում է նաև «ընտրակեղծիքի տեսակ» իմաստով:

Կաֆեհստ. գ. 1. Սրճարաններում (կաֆեներում) նստող, գործածվում է նաև «ոչ գործունյա, ոչ ակտիվ» իմաստով:

Կնքահաւր. գ. 1.(կրոն.) Այն անձնավորությունը, որ մկրտության ժամանակ, ավազանից ընդունելով մկրտվածին, որպես հոգևոր հայր պատրաստվում է այնուհետև հոգալ իր սանիկի կրոնական դաստիարակության մասին, քավոր: 2. Պսակադրության արարողության ժամանակ այն անձնավորությունը, որ խաչը բռնում է փեսայի և հարսի գլխին և հարսանիքի ընթացքում նրանց ընկերակցում է: Այժմ գործածվում է նաև «մաֆիայի ղեկավար» իմաստով:

«Կոճակ» բաղադրիչից կազմվել է «կոճակախաղ» իմաստային նորաբանությունը, որը նշանակում է «խորհրդարանում բացակա պատգամավորների փոխարեն կոճակ սեղմելը և քվեարկելը»:

Հազարատեղել. ան. դբ. Տարանջատել, հազար մասի բաժանել: Այժմ գործածվում է նաև «անմիաբանություն սերմանել» իմաստով:

Հեռագնա. ած. Հեռուն գնացող, հեռավոր տարածություններ կտրող, գործածվում է նաև «շատ խորամիտ, շատ խորհուրդներ պարունակող» իմաստով:

Հովհարում. գ. 1. Հովհարով հով փչելը, հովացնելը: 2. Քամու հոսանքով՝ բաց օդում փռելով քամուն տալը, այժմ նաև «որոշակի ռեժիմով էլեկտրաէներգիայի մատակարարման ընդհատում» իմաստով:

Հտպիտանալ. չբ. Հտպիտ դառնալ. գործածվում է «այլանդակվել» իմաստով:

Ղարաբաղացում. գ. Հիմնախնդիրը Ղարաբաղի օգտին լուծելը: 2. Հայաստանը Ղարաբաղ դարձնելը՝ Ղարաբաղի վերածելը. այժմ գործածվում է նաև «որևէ հիմնախնդրի լուծման ձգձգումը՝ դանդաղացումը Ղարաբաղի ինքնորոշման խնդրի հետ կապելը, դրանով պայմանավորելը» իմաստով:

Ճամբարափոխ, ած. ժամանակավոր կայարանը՝ բնակատեղին փոխած մարդ, այժմ գործածվում է նաև «քաղաքական դավանանքը փոխած» իմաստով:

Ճարովի, ած. (խսկց.) Ճեռքբերովի. գործածվում է նաև «հնարովի, կեղծ, թխովի, սարքովի» իմաստներով:

Ճեղքված, գ. 1. Ճեղքված տեղ, ճեղք: 2. Պատռվածքի բացված տեղ, պատռվածք: Գործածվում է նաև «պակաս, անբավարարություն, թերություն» իմաստով (բյուջեի ճեղքվածք):

Ճկունունակ, ած. Ճկունության, ճկվելու ունակ. գործածվում է նաև «հմուտ դիվանագիտությամբ իրադրության պահանջով փոփոխվելու, կողմնորոշվելու ունակություն ունեցող» իմաստով:

Մամլիչ, ած. 1. Մամլող, մամլելու ծառայող (գործիք, սարք, մեքենա): 2. Մամլումով զբաղվող, մամլելու գործով զբաղվող. այժմ գործածվում է նաև «ճնշում, կամքի թելադրանք» իմաստով (ԱՄՆ վարչակարգը օգտագործում է իր իմիջը որոշ երկրների դաս տալու ամերիկյան «մամլիչը» կիրառելու նպատակով):

Մամոնապաշտություն,գ. Մամոնին՝ հարստության աստծուն պաշտելը: Գործածվում է նաև «փողապաշտություն, ագահություն» իմաստով:

Մանկուրտ,գ. Բռնի կերպով հիշողությունից զրկված: Ստացել է նաև «իր ինքնուրույն արմատները չճանաչող» իմաստը:

«Մասիս» բաղադրիչով կազմվել և փոխաբերական իմաստ են ստացել մի շարք բառեր.

Մասիսակերտ, ած. Փխբ. Հսկա, վեհ, վեհաշուք:

Մասիսածուն, ած. Փխբ. Մասիսի ծյան նման մաքուր, անարատ:

Մասիսոտ, ած. Փխբ. Մասիսով տառապած, տագնապած և նրանով մտահոգված:

Մասիսված, դբ. Փխբ. Մասիսի պես գերված, տառապած, խոցված:

Մատնոցախաղ, գ. Մատնոցներով աճպարարություն: Գործածվում է նաև «կեղծիք, զեղծարարություն» իմաստով (Հերթական ընտրությունների ժամանակ քվեաթերթիկների հետ «մատնոցախաղի» հնարավորությունը պետք է բացառել):

«Մարգարիտ» բաղադրիչով կազմվել և փոխաբերական իմաստով գործածվում են մի շարք նոր բառեր.

Մարգարտաթույր, ած. Փխբ. Գեղեցիկ, ընտիր, թանկագին (Ականջ էին շոյում մարգարտաթույր երգերն ու պարերգերը):

Մառգառտամոգուն. գ. Փխբ. Աչքի ընկնող ստեղծագործությունների մրցություն:

Մառգառտաշունչ. ած. (բնստ.) Մարգարիտի փայլ. գեղեցկություն ունեցող:

Մառգառտատուն.գ. Փխբ. Գանձատուն, կուտակված արժեքների՝ գեղեցկությունների շտեմարան:

«Մեծ» բաղադրիչով կազմվել և փոխաբերական իմաստով են գործածվում մի շարք բառեր.

Մեծախտ. գ. Տվյալ ժամանակաշրջանին բնորոշ տարածված ախտ՝ հիվանդություն ոգու սովի, ոգեղենության կորստի արտահայտությամբ:

Մեծական. ած. Մեծերին. մեծ տարիքին վերաբերող գրականություն:

Մեծամասնական. ած. Մաժորիտար: Ընտրական համակարգի այն կետը, համաձայն որի պառլամենտում կամ Ազգային ժողովում ընտրվում են մեծ թվով ձայներ ստացող թեկնածուներ:

Մեծատեր. գ. Մեծ հարստությունների, խոշոր ընկերությունների՝ կորպորացիաների տեր (մագնատ):

Մինի բուրգ. գ. 1. Փոքր բուրգ: Գործածվում է նաև «կառավարման փոքր համակարգ, ուր ստորին օղակները ենթարկվում են վերին ամենաբարձր օղակին» իմաստով:

Մոոթեկիո. ած. Մորթի կրող. գործածվում է նաև «ծածկված, թաքնված» իմաստով:

Մուծվել. կր. և չբ. Մուծել-ի: 1.Բանկը՝ դրամարկղը ևն գումար մտցնել: 2.Վճարել: 3.Ցուցակի մեջ մտցնել՝ անցկացնել: 4.Ներդնել: Գործածվում է նաև «պաշտոնյային կամ դրամաշորթին գումար՝ կաշառք տալ» իմաստով:

Նախրապանական. ած. նախրապանին հատուկ՝ բնորոշ: Գործածվում է նաև «բիրտ, կոպիտ, անտաշ» իմաստով:

Նավթագող. գ. Նավթ գողացող: Ստացել է նաև «նավթ կորզելու համար հարմար առիթը օգտագործող» իմաստը:

Նեխայիճ. գ. Նեխած՝ ապականված լիճ: Գործածվում է նաև «ապականված միջավայր, համակարգ ևն» իմաստով:

Ներջրյա. ած. Ջրի մեջ գտնվող. գործածվում է նաև «ներքին՝ խորքային» իմաստով:

Ներքնակե. ած. Փխբ. Տափակ, անարտահայտիչ:

Նժարավոր. ած. Փխբ. Հեղինակություն ունեցող՝ ազդեցիկ:

Նորագալուստ. գ. 1.Նոր գալուստը: Գործածվում է նաև «վերստին թաղվելը, վերաթաղվելը այլ տեղում» իմաստով:

Նորագրանց. ած. 1. Նոր գրանցված, նոր գրանցում ստացած: Գործածվում է նաև «նոր առաջացած՝ նոր հայտնված» իմաստով:

Նոբախորտիկ. գ. 1.Նուրբ, համեղ պատառ: Գործածվում է նաև «հաճելի նյութ, ասելիք» իմաստով:

Շնածուկ. գ. Ծովային խոշոր գիշատիչ ձուկ: Ստացել է նաև «գիշատիչ, գազանաբարո, թալանչի, մեծ մակարդակի գռփող» իմաստները:

Ոոսասեզոն. գ. Որս անելու շրջանը (սեզոնը): Գործածվում է նաև «որևէ բան անելու, գործելու հնարավորության պահը, ժամանակը, առիթը» փոխաբերական իմաստով:

Չարենցաբառ. գ. (հեղ.)1. Չարենցին հատուկ՝ բնորոշ բառ: Գործածվում է նաև «հզոր, կողմնորոշվող, մեծարժեք բառ» իմաստով:

Պահաանակ. գ. 1.Ձինվորի մարմինը պահպանող զրահ: 2. Հմայիչ, կախարդական գիր: Այժմ նաև՝ «այն թերթը, որ կազմարարը դնում է գրքի և գրքի կազմի միջև՝ բնագիրը մաքուր պահելու համար» իմաստով:

Պառաառակ. գ.1.Բյուրեղ: Գործածվում է նաև «կաթով, շաքարով, սերուցքով և պտղահյութերով պատրաստվող սառեցրած քաղցր ուտելիք, սառնանույշ» իմաստով:

Պոոաատաոոդ. ած. Պողպատե ող ունեցող: Այժմ նաև՝ «ուժեղ, նենգ, վտանգավոր» իմաստով:

Պսակավորել.նբ 1.Պսակավոր դարձնել, գլխին պսակ դնել: Այժմ նաև՝ «գովաբանել, ըստ արժանվույն գնահատել» իմաստով:

Պտտեանել. պտոռ. Պտտել-ի, պտտել տալ: Այժմ նաև՝ «որևէ գումար շարժման մեջ դնել՝ շահույթ ստանալու ակնկալիքով» իմաստով:

Ձինսասիգաոետային. ած.1. Ձինս հագած և ծխող. այժմ նաև՝ Հույժ ժամանակակից:

Սառնամռուք. ած. 1. Սառը դեմքով. նաև՝ Անկարեկից, անհաղորդ:

Սրճախառն. ած. 1. Սրճի հետ խառնված: Նաև՝ Ոչ մտածված՝ պահի թելադրանքով:

Սոճառանային. ած. 1. Սրճարանին բնորոշ՝ վերաբերող: Նաև՝ Ոչ լուրջ, ոչ հավաստի:

Սֆինքսվել. չբ. (բնստ.) 1.Սֆինքսի վերածվել. սֆինքսանալ. նաև՝ քարանալ, պապանձվել:

Վառդագույն. ած. 1. Վարդի գույն ունեցող: 2. Փխբ. Պայծառ, ոչնչով չմթագնված, չմռայլված, երջանիկ: 3. Փխբ. Լավ, ոչ մռայլ, լավատեսական: 4. Փխբ. Ցանկալի, փափագելի: 5. Փխբ. Վարդի նման գերիչ՝ թովիչ՝ քաղցր: Այժմ նաև՝ Համասեռամոլ:

Տանիք. գ. Նույնն է՝ Ծածկ:

Տոնավաճառ. գ. Որևէ տոնի՝ հանդեսի ժամանակ կազմակերպված առևտուր: Այժմ նաև՝ Տարվա բոլոր եղանակներին մեծ տարածք ընդգրկող վայր, որտեղ կանոնավոր կերպով կատարվում է առևտուր:

Տուն. գ.1. Բնակարան, կացարան, ապրելու տեղ: 2. (պատմ.) Ազնվական տոհմ: 3. (պատմ.) Թագավորական տոհմ, հարստություն, դինաստիա: 4.Երդ, ծուխ: Ստացել է նաև «ցեղ, տոհմ, ժողովուրդ» իմաստները:

Փաքեք. գ.1. Կապոց, ծրար: 2. Թելի՝ լարի ևն փաքաքված խրծիկ՝կծիկ, փաքույթ:3.Փխբ. Տրցակ, փունջ, կապոց:Այժմ գործածվում է նաև «բոլոր հարցերն ընդգրկող ամբողջություն» իմաստով:

Քքածակ. գ. Նույնն է՝ քքանցք: Այժմ գործածվում է նաև «խելամտություն՝ գլխի ընկնելու՝ կռահելու կարողություն» իմաստով (Լրագրողը մի քիչ քքածակ պետք է ունենա):

Օճառային. ած. 1. Օճառին հատուկ, օճառի: 2. Փխբ. Օճառի նման, օճառի փրփուրների նման սպիտակ: Այժմ գործածվում է նաև «օճառի պղպջակի նման հօդս ցնդող,անհետացող, ոչ խոր, կիսասենտիմենտալ (կինոսերիալներ, օպերաներ, օպերետներ ևն) իմաստով:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976:
2. Եզեկյան Լ., Հայոց լեզու, Երևան, 2005:
3. Էլոյան Ս., Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Երևան, 2002:
4.Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1999: